կտակարանի, երդմնօղն առաջի քոյ համարեսցի իբր երդմնեցեալ առաջի մեր, նամակ պաշտօնի քոյ համարեսցի իբր նամակ գահէն մեծէ և բարեվարք տանէն հայոց և մեզ միաբան տեղակալաց և փոխանորդաց ընդունելի, գրուեցաւ 'ի մէջ միաբան տեղակալաց հայոց 'ի յերեսս երկրին հայաստանեաց յամսեանն դեկտեմբերի 25. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773։

Վկայեմք զի ձեռնադրեցին և կնքեցին և յանձնեցին։

Սամուէլ փոխանորդ Նախիջևանայ. }○

Զաքարայ փոխանորդ տայքու. }○

Մ . . . Դ։
Ա. . . . Դ.
Կ . . . Վ։

Եղիազար փոխանորդ աղուանից. }○

ԳԼՈՒԽ ԼԷ.

Երդմնողն հարկաւոր է երդմնիլ առաջի ատենի իշխանի և միոյ դծագրի դնելով աջու ձեռն իւր 'ի վերայ Սուրբ կտակարանի, և ձախոյ ձեռն 'ի վերայ կրծոց իւրոց, և պարզ բառիւ բերանով իւրով խոստովանիլ զոր ինչ երդմնելոց է, և խոստանալ զոր ինչ կատարելոց է, յետոյ խոնարհիլ համբուրել կտակարանն և ձեռնադրել թուղթն, որում բանք 'ի բերանոյ երդման իւրոյ գոցի Շարադրեալ, այսպէս կատարումն լինի երդման։